ՊԵՏՈՒԹՅԱՆԿԱՐԻՔՆԵՐԻՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N < ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-2018/6/3>

Ք.Արտաշատ «19» 03 2018 թ.

<<Արտաշատի ԲԿ>>ՓԲԸ-ի կարիքների համար, ի դեմս ղեկավար Ս.Հախվերդյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Արման Ասմանգուլյան ԱՁ-ն, ի դեմս տնօրեն Ա.Ասմանգուլյան -ի, որը գործում է Արման Ասմանգուլյան ԱՁ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր- գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Լծերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2299968 երկու միլիոն երկու հարյուր իննսունինը հազար ինը հարյուր վաթսունութ ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (որը կսահմանվի սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող կնքվող համաձայնագրով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում և այդ միջոցների շրջանակներում) (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[3]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» << օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[4]:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[5]:

8.8 Ապրանքի մատակարարմանժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկանգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի

---

[4] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[5] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

սատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[6]

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀԱՐՏԱՇԱՏԻ ԲԿ>ՓԲԸ	Արման Ասմանգուլյան ԱՁ
Ք.Արտաշատ, Ա.Խաչատրյան 116	Ք.Երևան , Խորենացի 4-րդ նրբ. 69 տուն
Հ/Հ-163098222223	<<Արդշինբանկ >> ՓԲԸ Աղասյան մ/ճ
ՀԷԲ Արտաշատի	Հ/Հ 2474600042830000
ՀԿՀՀ-04220707	ՀՎՀՀ30923517
Ս.Հախվերդյան	Ա.Ասմանգուլյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

[6] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 2

<19><մարտ> 2018թ.կնքված

< ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-2018/6/3> *ծածկագրով գնման պայմանագրի*

ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման ժամանակացույց Մատակարարման ժամկետը և վայրը	Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո ամենաուշը՝ 2աշխատանքային օրվա ընթացքում : Մատակարարումը իրականացնել եռամսյակային համամասնությամբ հավասարաչափ: Ապրանքի տեղափոխումը իրականացնում է մատակարարը , հասցե՝ ք.Արտաշատ ,Ա. Խաչատրյան 116
Վճարման ժամկետը /վճարման ժամանակացույց	Վճարումներն իրականացվելու են Պայմանագրի գործողության շրջանակներում հաստատված ընդունման –հանձման արձանագրությունների հիման վրա՝ 30 աշխատանքային օրում :

ԳՆՈՐԴ

<ԱՐՏԱՇԱՏԻ ԲԿ>ՓԲԸ

Ք.Արտաշատ, Ա.Խաչատրյան 116

Հ/Հ-163098222223

ՀԷԲ Արտաշատի

ՀԿՀՀ-04220707

Ս.Հախվերդյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Արման Ասմանգուլյան ԱՁ

Ք.Երևան , Խորենացի 4-րդ նրբ. 69 տուն

<<Արդշինբանկ >> ՓԲԸ Աղասյան մ/ճ

Հ/Հ 2474600042830000

ՀՎՀՀ30923517

Ա.Ասմանգուլյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 1

« 19 » 03 2018 թ. կնքված

< ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-2018/6/3> ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
1	22110000	Դեղորայքի գիրք N3	ՀՀ	A -4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 70 գ/ք.մ./, կարված, բումվինիլ, կոշտ կազմով, 200 թերթ	հատ	1320	52800	40	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	40	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
2	22110000	Դեղորայքի գիրք N1	ՀՀ	A -4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 70 գ/ք.մ./, կարված, բումվինիլ, կոշտ կազմով, 200 թերթ	հատ	1320	26400	20	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	20	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
3	22110000	Դեղորայքի գիրք N6	ՀՀ	A -4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 70 գ/ք.մ./, կարված, բումվինիլ, կոշտ կազմով, 200 թերթ	հատ	2220	111000	50	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	50	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
4	22110000	Ընդունարանի գիրք 200	ՀՀ	A -4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված	հատ	1320	13200	10	Ք.Արտաշատ	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո

		թերթ		տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 70 գ/ք.մ./, կարված, բումվինիլ, կոշտ կազմով, 200 թերթ					,Ա.Խաչատրյան 116		
5	22110000	Տաբելի գիրք	ՀՀ	A -4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 70 գ/ք.մ./, կարված, բումվինիլ, կոշտ կազմով, 200 թերթ	հատ	1320	39600	30	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	30	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
6	22810000	ՆԳԲ գրանցամատյան	ՀՀ	A -4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 70 գ/ք.մ./, կարված, բումվինիլ, կոշտ կազմով, 200 թերթ	հատ	1320	13200	10	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
7	22810000	Նարկոտիկի գիրք	ՀՀ	A -4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 70 գ/ք.մ./, կարված, բումվինիլ, կոշտ կազմով, 200 թերթ	հատ	1320	13200	10	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
8	39263200	Գրասենյակային գիրք 100թերթ	ՀՀ	A -4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 70 գ/ք.մ./, կարված, բումվինիլ, կոշտ կազմով, 100 թերթ	հատ	636	127200	200	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	200	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
9	39263200	Գրասենյակային գիրք 200թերթ	ՀՀ	A -4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 70 գ/ք.մ./, կարված, բումվինիլ, կոշտ կազմով, 200 թերթ	հատ	1308	130800	100	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	100	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
10	22820000	Էպիկրիզ	ՀՀ	A-4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք.մ./	հատ	5.76	5760	1000	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	1000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
11	22110000	Շտապ	ՀՀ	A -4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված	հատ	1320	39600	30	Ք.Արտաշատ	30	Պայմանագիրը ուժի մեջ

		կանչի գիրք		տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 70 գ/ք.մ./, կարված, բումվինիլ, կոշտ կազմով, 200 թերթ					,Ա.Խաչա տրյան 116		մտնելուց հետո
13	22110000	Դրամարկղի գիրք	ՀՀ	A -4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 70 գ/ք.մ./, կարված, բումվինիլ, կոշտ կազմով, 200 թերթ	հատ	2880	5760	2	Ք.Արտաշատ ,Ա.Խաչա տրյան 116	2	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
17	22820000	Ստացիոնար հիվանդի քարտ երեխայի	ՀՀ	A-4 ֆորմատի տպագրական թուղթ, 8 հատ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 100գ/ք.մ./, կազմը 150գ ք.մ կ	հատ	79.2	118800	1500	Ք.Արտաշատ ,Ա.Խաչա տրյան 116	1500	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
18	22820000	Մեծահասակի ամբուլատոր քարտ	ՀՀ	A-4 ֆորմատի տպագրական թուղթ, 24 հատ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 100 գ/ք.մ./, կազմը 250 գ ք.մ. խռոմ, կարված մետաղակար	հատ	86.4	345600	4000	Ք.Արտաշատ ,Ա.Խաչա տրյան 116	4000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
19	22820000	Երեխայի ամբուլատոր քարտ տղա	ՀՀ	Մանկական ամբուլատոր քարտ/տղա,/ հատ A-4 ֆորմատի տպագրական թուղթ, 30 հատ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 100 գ/ք.մ./, կազմը 250 գ ք.մ. խռոմ, կարված մետաղակար	հատ	118.8	237600	2000	Ք.Արտաշատ ,Ա.Խաչա տրյան 116	2000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
20	22820000	Երեխայի ամբուլատոր քարտ աղջիկ	ՀՀ	Մանկական ամբուլատոր քարտ /աղջիկ/ հատ A-4 ֆորմատի տպագրական թուղթ, 30հատ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 100 գ/ք.մ./, կազմը 250 գ ք.մ. խռոմ, կարված մետաղակար	հատ	118.8	237600	2000	Ք.Արտաշատ ,Ա.Խաչա տրյան 116	2000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
23	22820000	Ծննդաբերության պատմություն	ՀՀ	A-4 ֆորմատի ,8հատ տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի	հատ	84	42000	500	Ք.Արտաշատ ,Ա.Խաչա	500	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո

		ն		/օֆսեթ 100գ /ք.մ./ կազմը150գք.մ կ					տրյան 116		
25	22820000	Անհատակա ն քարտ հոիության և ծննդաբերու թյան	ՀՀ	A-4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք.մ./	հատ	4.608	11520	2500	Ք.Արտաշ ատ ,Ա.Խաչա տրյան 116	2500	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
28	22820000	Կանխարգել իչ պատվաստո ւմների մասին վկայական	ՀՀ	A-5 ֆորմատի ,4հատ տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք.մ./	հատ	17.28	44928	2600	Ք.Արտաշ ատ ,Ա.Խաչա տրյան 116	2600	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
29	22820000	Մահվան վկայական	ՀՀ	A-4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք.մ./	հատ	4.56	9120	2000	Ք.Արտաշ ատ ,Ա.Խաչա տրյան 116	2000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
30	22820000	Մահվան վկայականի կտրոն	ՀՀ	A-4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք.մ./	հատ	4.56	9120	2000	Ք.Արտաշ ատ ,Ա.Խաչա տրյան 116	2000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
31	22820000	0001 ձև (պետ. պատվեր)	ՀՀ	A-4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք.մ./	հատ	4.296	42960	10000	Ք.Արտաշ ատ ,Ա.Խաչա տրյան 116	10000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
32	22820000	0002 ձև(պետ.պա տվեր)	ՀՀ	A-4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք.մ./	հատ	4.26	191700	45000	Ք.Արտաշ ատ ,Ա.Խաչա տրյան 116	45000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
34	22820000	ԱԱՊ հաշվառման ձև	ՀՀ	A-4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի միակողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք.մ./	հատ	4.56	18240	4000	Ք.Արտաշ ատ ,Ա.Խաչա տրյան 116	4000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո

35	22820000	Նշանակման թերթիկ	ՀՀ	A-4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք.մ./	հատ	4.26	42600	10000	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	10000	Պայմանագիրը ուժ մտնելուց հետո
36	22820000	Շտապ կանչի թերթիկ	ՀՀ	A-4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք.մ./	հատ	4.26	51120	12000	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	12000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
37	22820000	Առողջության անձնագիր	ՀՀ	A-4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք.մ./	հատ	5.76	5760	1000	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	1000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
42	22820000	Դեղատոմս սովորական	ՀՀ	A-5 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք.մ./	հատ	2.148	64440	30000	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	30000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
44	22820000	Հոգեմետ դեղատոմս	ՀՀ	Հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի N 2 դեղատոմսերի ձևը տպագրվում է 148 մմ x 210 մմ չափսերով (A 5) սպիտակ թղթի վրա: Դիմերեսի և դարձերեսի տառերը, գծերը կապույտ են: Ձևաթղթի դիմերեսի վրա տպագրական դաշտը սահմանվում է թղթի եզրերից՝ վերևից և ներքևից 15 մմ, ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ: ինքնապատճե թղթով 2	հատ	12.6	94500	7500	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	7500	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
48	22820000	Բջջաբանական քննության բլանկ	ՀՀ	A5 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ/ք.մ./	հատ	2.28	11400	5000	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	5000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
51	22820000	Ուլտրաձայնային հետազոտու	ՀՀ	A-4 ֆորմատի տպագրական թուղթ միակողմ սպիտակ գույնի տառերը և	հատ	2.88	5760	2000	Ք.Արտաշատ ,Ա.Խաչա	2000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո

		թյան բլանկ		գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք.մ./					տրյան 116		
53	22820000	Էխոսոնոգրաֆիա	ՀՀ	A5 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի միակողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ/ք.մ./	հատ	2.28	18240	8000	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	8000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
54	22820000	ԷՍԳ հետազոտություն	ՀՀ	A5 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի միակողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ/ք.մ./	հատ	2.28	22800	10000	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	10000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
55	22820000	Ռենտգեն հետազոտություն	ՀՀ	A5 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի միակողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ/ք.մ./	հատ	2.28	18240	8000	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	8000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
56	22820000	Գաստրոսկոպ. եզրակացություն	ՀՀ	A-4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք.մ./	հատ	5.76	2880	500	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	500	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
57	22820000	Դոպլերոգրամմայի եզրակացություն	ՀՀ	A5 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի միակողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ/ք.մ./	հատ	2.88	1440	500	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	500	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
58	22820000	Կոլոնոսկոպիայի եզրակացություն	ՀՀ	A-4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք.մ./	հատ	5.76	2880	500	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	500	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
59	22820000	Սերոլոգիական հետազոտություն	ՀՀ	A5 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի միակողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ/ք.մ./	հատ	2.88	5760	2000	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	2000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
61	22820000	Դեղորայքի պահանջագիր	ՀՀ	A5 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի միակողմ տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ/ք.մ./	հատ	2.28	22800	10000	Ք.Արտաշատ ,Ա.Խաչա	10000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո

									տրյան 116		
62	22820000	Ուղեգիր լաբորատոր գործիքային հետազոտության N6	ՀՀ	A-5 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք.մ./	հատ	2.28	**22800**	10000	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	10000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
64	22820000	Ուղեգիր հիվ. բուժ. օգնության և հետազոտության	ՀՀ	A-5 ֆորմատի տպագրական թուղթ,միակողմ սպիտակ գույնի տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք.մ./	հատ	2.28	15960	7000	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	7000	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
65	22820000	Նորածնի դուրս գրման տեղեկանք	ՀՀ	A-4 ֆորմատի տպագրական թուղթ ,միակողմ սպիտակ գույնի տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք.մ./	հատ	5.76	2880	500	Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116	500	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո
X	x	x	x	x	x	x	2299968	x	x	x	x

** մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ԳՆՈՐԴ

<ԱՐՏԱՇԱՏԻ ԲԿ>ՓԲԸ

Ք.Արտաշատ, Ա.Խաչատրյան 116

Հ/Հ-163098222223

ՀԷԲ Արտաշատի

ՀՎՀՀ-04220707

Ս.Հախվերդյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Արման Ասմանգուլյան ԱՁ
Ք.Երևան , Խորենացի 4-րդ նրբ.
69 տուն
<<Արդշինբանկ >> ՓԲԸ Աղասյան մ/ճ
Հ/Հ 2474600042830000
ՀՎՀՀ30923517
Ա.Ասմանգուլյան

/ստորագրություն/

Կ.Տ